զատկական տօնների միջոցին։ Նրան ընկերացել է մի ուրիշ գերման գիտնական՝ արեւելագէտ դ–ր Գէորգ Ռոզէն, որ Կ. Պոլսից նոր է եկած եղել Թիֆլիս։ Հայերէն նա ուսած է եղել տակաւին Գերմանիայում, պրոֆեսոր Պիտերմանի մօտ, որ իր ժամանակի առաջին հայագէտներից մէկն էր Եւրոպայում։

Թիֆլիս–Երեւան ճամբան Բոդենշտէդտ եւ իր ընկերը անցել են Աղստաֆա–Դիլիջան–Սեւան–Ախտա–Էյլար գծով, մասամբ փոստային սայլակով եւ մասամբ էլ ձիով։ Ճանապարհին նրանց ընկերացած է եղել ինչ որ «հայ իշխան» Տ., պետական պաշտօնեայ։ Անսալով վերջինիս թախանձագին՝ գերման ճամբորդները Երեւանում նրա տանն են իջեւանել։

Մի կողմ կը թողնենք հեղինակի զուտ ճամբորդական տպաւորութիւնները, ինչպէս նաեւ նրա գրուածների նկարագրական մասը։ Գիտական տեսակէտից ներկայիս համար առանձին արժէք չեն ներկայացնում նաեւ նրա դատողութիւնները հայոց պատմութեան եւ մատենագրութեան մասին։ Մեզ համար առանձնապէս կարեւոր են եւ ուշադրութեան արժանի, բացի մեր առաջին յօդուածում մէջ բերածներից, հայ երկրի եւ հայ ժողովրդի ներքին պայմաններին վերաբերող կտորները։

«Առաջին տպաւորութիւնը,— ասում է Բոդենշտէդտ («Հազար ու մի օր, Ա. 141),— որ Եւրոպացի մարդու վրայ գործում է Երեւանը, լաւ անուանել կարելի չէ։ Քաղաքի փողոցները սալայատակուած չեն, կեղտոտ են։ Տները փոքր են եւ ցածլիկ, այն էլ կաւի պրիսպների եռուր ծածկուած։ Հայաստանի մայրաքաղաքի ամենամեծ փողոցը բաղդատել իսկ կարելի չէ գերմանական ռեւէ յետ ընկած վայրի ամենափոքր փողոցի հետ անգամ»։

Իրենց հիւրընկալ «հայ իշխան Տ.ի» տանը Սեւանայ իշխանաձուկը եւ Երեւանի ընտիր գինին վայելուց յետոյ — դանակ–պատառաքաղի, սեղան–աթոռի գործածութիւնը չկար այն ժամանակ — գերման ճամբորդները քաղաք են դուրս գալիս՝ շրջագայելու։ Հայ կանայք առանց բացառութեան քօղի տակ ծածկուած են շրջելիս եղել։

Ճամբորդները նախ այցելում են մահմեդական մզկիթը։ Թիֆլիսից՝ թաթարերէնի ուսուցիչ Միրզա Շադլից յանուն մի մոլլայի բերած յանձնարարական նամակը հնարաւորութիւն է տալիս նրանց մինչեւ իսկ՝ ներկայ գտնուել մզկիթում՝ Ալիի յիշատակին կատարուող ծիսակատարութեանց։

Նոյն օրը եւ եթ Բոդենշտէդտ եւ իր ուղեկիցը այցելութեան են գնում Արովեանին, որ եւ այնուհետեւ դառնում է նրանց առաջնորդը։ Նրանք միասին լինում են նաեւ քաղաքի բերդապետ զօրական Ֆոն Քիլի մօտ՝ (ազգով գերման) պատմական «Սարդարի պալատում»։

«Այս յարկի տակ էր ապրում,— ասում է Բ.,— տակաւին ոչ–շատ տարիներ առաջ, Երեւանի տէր սարդար Հուսսէյնը, որին Ֆաթալի–Շահը մուրացկանի վիճակի հասցրեց, եւ որը իր կեանքի վախճանը գտաւ Պարսկաստանում, մի գոմի մէջ։ Ռազմագէտ ճամբորդները յաճախ իրաւամբ զարմանք են յայտնել, թէ ինչպէ՛ս է որ Երեւանը գրաւող զօրավար Պասկեւիչը կայսեր կողմից Երեւանցի պատուանունին է արժանացել, քանի որ դժուար է պատկերացնել աւելի դիւրին «հերոսութիւն» պատմութեան մէջ, քան՝ այս քաղաքի առումն։ Երեւանի դիրքն ընդհանրապէս եւ նրա ողորմելի բերդինը մասնաւորապէս՝ այնչա՛փ քիչ ռազմագիտական դժուարութիւններ է ներկայացնում, որ նրա գրաւումը պէտք է դասել պատերազմական ամենադիւրին խնդիրների շարքը, նկատի ունենալով մանաւանդ բնակիչների՝ առածի դասն անցած՝ վախկոտութիւնը»։

Այնուհետեւ Բ. տալիս է սարդարի պալատի եւ յատկապէս նրա հայելապատ եւ նկարչագեղ, պարսկական–արեւելեան ոճով կառուցուած մեծ դահլիճի նկարագրութիւնը։ Եւ սակայն մարդակերտ ու «տհաս արուեստի» այդ յուշարձանից շատ աւելի գրաւչութիւն է ներկայացրել մեր բանաստեղծ–ճամբորդի աչքում «ուստուածակերտ ամենասքանչելի յուշարձաններից մէկը, որ Արարիչը երբեւիցէ կանգնել է այս երկրի վրայ»։

Դա՝ Արարատն է, որ իր ողջ վեհութեամբ ցցուում է նրա տեսողութեան առջեւ, սարդարի պալատի պատշգամից։ Մասսի նկարագրութեան համար խօսքեր պակսում են անգամ Բոդենշտեդտ–բանաստեղծին։

«Ես պէտք է մի ամբողջ հատոր գրէի,— ասում է Բ.,— եթէ կամենայի թէկուզ ուր-